# Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան 20.07.2021թ, ժ 10:00, ք. Սևան, Նաիրյան, 164

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղուկասյան - Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մկրտչյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի գլխ. մասնագետ

Լ. Խալաֆյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի մասնագետ

Է. Ղազարյան – Սևանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական գործառույթների համակարգող

Մ. Ավետիսյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան – Սևանի համայնքապետարան աշխատակազմի գլխ. մասնագետ

ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և բավարար գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունների օրը և ժամը սահմանելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 01.07.2021 թ հրավերը տեղադրվել է www.armeps.am էլեկտրոնային գնումների կայքում և հրապարակվել է www.gnumner.am կայքում: հայտերի բացման նիստը սկսվեց 2021թ. հուլիսի 16-ին ժամը 12:00-ին, իսկ մեկ աշխատանքային օրով կասեցումից հետո շարունակվեց 2021թ. հուլիսի 20-ին ժամը 10:00-ին:

1.2 Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի բակային տարածների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| **1** | **"Ճան Շին" ՍՊԸ** | **Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 28/3** |
| **2** | **"Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ** | **Ք. Երևան, Կոմիտասի պ., 5** |

2. Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- հայտ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին, աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվ, գնի առաջարկ: "Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված չէր աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը: Բացված հայտերում հրավերով պահանջվող մյուս բոլոր փաստաթղթերը առկա են: "Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում տեղ գտած անհամապատասխանության ուղղման համար հանձնաժողովը նիստը մեկ աշխատանքային օրով կասեցրեց, իսկ "Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ-ն armeps.am ծանուցվեց տեղ գտած անհամապատասխանության մասին, առաջարկով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղղելու անհամապատասխանությունը: "Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ-ի կողմից աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է սահմանված ժամկետի խախտումով 19.07.2021թ. ժամը 18:00-ի փոխարեն, այն ուղարկվել է 19.07.2021թ. ժամը 18:17-ին, այսինքն աշխատանքային օրվա ավարտից հետո, իսկ ուղարկված ծավալաթերթ-նախահաշվում տեղ են գտել բազմաթիվ թվաբանական սխալներ, ինչպես առանձին աշխատանքների համար սահմանված դաշտերում, այնպես էլ

բաժինների հանրագումարներում: Արդյունքում համաձայն աշխատանքների առանձին փողերի համար մասնակցի կողմից սահմանված միավոր արժեքների, աշխատանքների կատարման ընհանուր արժեքը պետք է ստացվեր 252.032.742 դրամ, այնինչ մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթում ստացվել է 252.000.000 դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- գնահատող հանձնաժողովի կողմից "Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվեց ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու պատճառով, իսկ "Ճան Շին" ՍՊԸ-ի ներկայացրած հայտը էլեկտրոնային եղանակով գնահատվեց բավարար և "Ճան Շին" ՍՊԸ-ն ծանուցվեց գների իջեցման շուրջ բանակցությունների օրվա և ժամի մասին::

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Մասնակիցների առաջարկած գները՝

ՀՀ դրամ

| Սևան համայնքի բակային փարածքների հիմնանորոգման աշխատանքներ | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Արժեքը | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | "Ճան Շին" ՍՊԸ | 210000000 | 42000000 | 252000000 |
| 2 | "Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ | 210000000 | 42000000 | 252000000 |

թվաբանական սխալներ չկան

6. Գնային առաջարկների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց "Լեգենդ Քնսթրաքշն" ՍՊԸ-ի հայտը մերժել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակցին որոշելու համար՝ ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կարգով, բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների իջեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների 2021թ. հուլիսի 22-ին ժամը 09:30-ից մինչև 09:45-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2021թ. հուլիսի 22-ին ժամը 09:30-ին, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________ Ա. Ղուկասյան

Անդամներ՝ ______________ Մ. Մկրտչյան

______________ Մ. Ավետիսյան

______________ Լ. Խալաֆյան

______________ Է. Ղազարյան

Քարտուղար՝ ______________ Ա. Ավետիսյան